



**Burbank Unified School District**  
Superintendent's Office  
1900 W. Olive Avenue  
Burbank, CA 91506  
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

**Board of Education**  
Dr. Armond Aghakhanian, President  
Steve Frintner, Vice President  
Charlene Tabet, Clerk  
Steve Ferguson  
Dr. Roberta Reynolds

**Superintendent**  
Matt Hill, Ed.D.

7-16-2020

Հարգելի ընտանիքներ, աշակերտներ և աշխատակիցներ

Խնդրում եմ նշել, որ դպրոցները բացվելու վերաբերյալ նորությունների թողարկումները տեղադրված են շրջանի կայքում՝ անգլերեն, իսպաներեն և հայոց լեզուներով <https://www.burbankusd.org/Reopening>: Կորոնավիրուսին վերաբերվող նախնական թարմացումները տեղադրված են <https://www.burbankusd.org/COVID-19> կայքում:

#### **Դպրոցների բացումը 2020-21 ուսումնական տարվա ընթացքում**

Ինչպես հայտարարվեց, երկուշաբթի օրը, ուսումնական տարին կսկսվի **օգոստոսի 17-ին 100% հեռակա ուսուցման** մոդելի միջոցով: Մենք վերահսկում ենք առողջական վիճակը և իրականացնում ենք վերջերս հրապարակված [Լու Անջելեսի գավառի հանրային առողջապահության կրթությանը վերաբերվող հրամանները, որպեսզի](#) որոշենք, թե երբ կկարողանանք օգտվել հիբրիդ մոդելից: Մենք նախորոք հարցադրում կկատարենք մինչև հիբրիդ մոդելին անցնելը:

**Տեխնոլոգիական նորություններ.** Եթե դուք անցյալ շաբաթ չեք լրացրել մոդելին վերաբերվող հարցաթերթիկը և Քրոմբուկի, թեժկետի կամ երեխաների խնամքի կարիք ունեք, խնդրում ենք սեղմել համապատասխան հղումը նշելու ձեր տեխնոլոգիական կամ երեխաների խնամքի կարիքները յուրաքանչյուր երեխայի համար: Հարցաթերթիկին կարելի է պատասխանել մինչև 7/21/20: Եթե արդեն լրացրել եք հարցաթերթիկը կամ տեխնոլոգիական սարքի կամ երեխաների խնամքի կարիք չունեք, հարկավոր չէ լրացնել հարցաթերթիկը:

[Տարրական դպրոցի հարցաթերթիկ \(հայերեն\)](#)

[Միջնակարգ դպրոցի հարցաթերթիկ \(հայերեն\)](#)

**Հեռակա ուսուցման մոդել.** Մենք շարունակում ենք աշխատել Բրբենքի ուսուցիչների ասոցիացիայի հետ՝ հեռակա ուսուցման աշնանային մեր նոր մոդելը մշակելու համար և կկիսվենք ձեզ հետ ապագա մի քանի շաբաթների ընթացքում:

**Անկախ ուսուցման ակադեմիա (ILA).** Եթե ցանկանում եք օգտվել անկախ ուսուցման ակադեմիայի մոդելից, խնդրում ենք էլեկտրոնային փոստով նամակ ուղարկել [johnparamo@burbankusd.org](mailto:johnparamo@burbankusd.org) հասցեին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:

**2020/2021 ուսումնական տարվա սննդի արտոնություններ.** Դիմումագիրը կարելի է լրացնել համացանցում: Շատ կարևոր է, որ բոլոր այն ընտանիքները, ովքեր հավատում են, որ կորակավորվեն, պետք է ամեն տարի լրացնեն այս դիմումագիրը: Մեկ դիմումագիր յուրաքանչյուր աշակերտի համար: Խնդրում ենք սեղմել այս հղումը, դիմումագիրը լրացնելու համար <https://www.busdfoodservices.com/index.php?sid=1101131625567654&page=lunchapps>

Դպրոցները բացվելու վերաբերյալ թարմացված փաստաթղթերը հասանելի են [սեղմելով այստեղ](#): Խնդրում եմ նշել, որ այս տեղեկությունը կարող է փոփոխվել ըստ տեղական առողջապահական պայմանների և մեր աշխատակիցների արհմիությունների բանակցությունների:

Թարմացված տեղեկություններ կհաղորդվեն օգոստոսի 6-ին կայանալիք կրթական գրասենյակի հերթական ժողովի ընթացքում, որը տեղի կունենա երեկոյան ժամը 7-ին:

Ամենավերջին նորությունների հետ կարելի է ծանոթանալ այս կայքում. <https://www.burbankusd.org/Reopening>. Հաճախակի տրվող հարցերի հետ կարելի է ծանոթանալ այս կայքում. <https://www.burbankusd.org/reopeningfaqs>. Ձեր առաջարկները կարող եք ուղարկել [re-opening@burbankusd.org](mailto:re-opening@burbankusd.org) հասցեին:

Աշխատելով միասին, մենք ավելի կհզորացնենք ԲԴՄՇ-ն:

Հոգատարությամբ,



Դոկտոր Մաթ Հիլլ  
Գերատեսուչ